ԼԵԳԵՆԴԱՐ ԿԱՄՈՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Պրոֆ. Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Սիմոն Արշակի Տեր-Պետրոսյանը պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներների այն ականավոր գործիչներից է, որոնք դեռևս Ռուսաստանում մարքսիստական պարտիայի ստեղծման արշալույսին, ընդհատակի դաժան պայմաններում Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ կոփվեցին ու դարձան ռևոլյուցիայի լեգենդար հերոսներ, պրոլետարիատի գործին մինչև վերջ նվիրված սկզբունքային, կայուն ու անսահմանորեն խիզախ մարտիկներ։

Վ. Ի. Լենինն անձամբ ճանաչում և շատ բարձր էր գնահատում Կամոյին։ 1919 թ. Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հիմնադիրն ու առաջնորդը նշում էր, որ ինքը Կամոյին դիտե հիմնավոր կերպով, «որպես միանգամայն բացառիկ նվիրվածության, խիզախության և հոանդի տեր մարդու»[1]։

Պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկին, որը Կամոյի մասին առաջին անգամ լսել էր 1905 թ., գրում է, որ նրա մասին «պատմությունները այնքան զարմանալի ու լեգենդար էին, որ նույնիսկ այն հերոսական օրերին դժվար էր հավատալ, թե մարդ կարող է իր մեջ համատեղել այնքան շատ, գրեթե հեքիաթային խիզախությունը՝ աշխատանքում անդավաճան հաջողության հետ և արտասովոր հնարագիտությունը՝ հոգու մանկական պարզության հետ։ Ես այն ժամանակ մտածում էի, որ եթե գրվի Կամոյի մասին այն ամենը, ինչ ես լսել եմ, ոչ ոք չի հավատա այդպիսի մարդու ունալ գոյությանը, և ընթերցողը Կամոյի կերպարը կընդունի որպես վիպասանի հնարածը... Բայց, ինչպես քիչ չի պատահում, այնպես եղավ, որ իրականությունը գերազանցեց «մտացածիները» իր բարդությամբ և պայծառությամբ»[2]։ Մ. Գորկին Կամոյին որակում է որպես «բացառիկ խիզախ աշխատողի ռևոլյուցիոն տեխնիկայի բնագավառում»[3]։ Ն. Կ. Կրուպսկայան հիացմունքով է նշել Կամոյի չափազանց հանդուգն խիզախության և անհողդողդ կամքի ուժի մասին[4]։

Կամոյի մասին գրել ու խոսել են շատ ականավոր մարդիկ՝ բարձր գնահատելով նրա մեծ ծառայությունը պարտիային ու ժողովրդին։ Կամոյի կյանքն ու գործունեությունը վերարտադրվել է բազմաթիվ գրքերում, հոդվածներում, գեղարվեստական գործերում։ Մեր հոդվածի նպատակն է տալ Կամոյի հարուստ ու բազմակողմանի ռևոլյուցիոն գործունեության ուրվագիծը։

---

1 Ленинский сборник, XXXV, *էջ 73։*

2 М. Горький, Собрание сочинений, т. 17, Москва, 1952, *էջ 336։*

3 *Նույն տեղում։*

4 *Տե՛ս* Н. К. Крупская, Воспоминания о Ленине, Москва, 1957, *էջ 124։*

* * *

Կամոն ծնվել է 1882 թ. մայիսի 27(15)-ին Գորի քաղաքում, որտեղ և ստացել է իր նախնական կրթությունը սկզբում ռուսական ծխական, իսկ ապա հայկական քաղաքային դպրոցում։ 1895 թ. նա հեռացվում է դպրոցից որպես «վտանգավոր անձնավորություն»։ 1901 թ. Կամոն տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ականավոր գործիչների կողմից ընդգրկվում է ակտիվ ռևոլյուցիոն աշխատանքի մեջ, ընդունվում ՌՍԴԲԿ Թիֆլիսի կազմակերպության շարքերը։ Պարտիական կազմակերպության հանձնարարությամբ Կամոն մեծ աշխատանք է կատարում ռևոլյուցիոն մարքսիստական գրականություն տարածելու, բանվորական ցույցեր կազմակերպելու, անլեգալ տպարաններ ստեղծելու ուղղությամբ։ 1903 թ. պարտիայի Կովկասյան Միութենական կոմիտեի առաջարկով Կամոն եռանդուն մասնակցություն է ունենում Ավլաբարի անլեգալ տպարանի կազմակերպմանը, որտեղ տպագրվեցին Վ. Ի. Լենինի մի շարք աշխատությունները, կովկասյան բոլշևիկների օրգան «Պրոլետարիատի կռիվը», «Պրոլետարիատի կռվի թերթիկը» և այլ մարքսիստական գրքեր, բրոշյուրներ՝ ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով։ Այդ հրատարակությունները տարածվում էին Անդրկովկասում, հատկապես Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, պայքարի հանում բանվորներին ու գյուղացիներին ցարիզմի ու բուրժուազիայի դեմ։ Այս գործում Կամոն ցուցաբերում է մեծ հմտություն, նա շրջագայում է Անդրկովկասի մի շարք վայրերում, երկաթուղով գալիս է նաև Ալեքսանդրապոլ՝ իր հետ բերելով Կովկասյան Միութենական կոմիտեի հրատարակություններ։ Թիֆլիսում իր կազմակերպած տպարաններից մեկի մասին, որտեղ տպագրում էին հայերեն գրքեր, Կամոն հետագայում գրել է. «1903 թվականին ինձ հաջողվեց կարգի գցել հայերեն գրքերի տպագրության գործը։ Ես և մի պրոպագանդիստ, գրաշար Դավիթը, ձեռք բերեցինք տառեր և այլ տպարանային պիտույքներ... Կամաց-կամաց մենք կազմակերպեցինք տպարան»[5]։

1903 թ. նոյեմբերին Կամոն ձերբակալվում է Բաթումիում, ուր նա գնացել էր ռևոլյուցիոն գրականություն տարածելու, և բանտարկվում։ Այդ նրա առաջին ձերբակալությունն էր, որից հետո Կամոն ենթարկվում է ամենադաժան հալածանքների. ձերբակալությունները հաջորդում են իրար, նա տեղափոխվում է բանտից-բանտ, բազմիցս դատապարտվում է մահապատժի և երկարամյա տաժանակրության։ Սակայն ընկճել խիզախ ռևոլյուցիոների ոգին, թուլացնել նրա երկաթյա կամքը ոչ ոքի չի հաջողվում։ Կամոն իր ամբողջ կյանքում մնում է անկոտրում ու ռևոլյուցիայի հաղթանակի նկատմամբ խոր հավատով լի։ ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի արխիվում պահվում է Կամոյի ինքնակենսագրական անկետան, որը քաջարի բոլշևիկի գեղեցիկ կյանքի հերոսական տարեգրության հիանալի փաստաթուղթ է։ Անկետայի այն հարցերին, թե ենթարկվե՞լ եք հալածանքների պարտիական աշխատանքի համար և ի՞նչ ռևոլյուցիոն գործունեություն եք ունեցել, Կամոն հակիրճ պատասխանում է. «Ձերբակալվել եմ 6 անգամ, փախել եմ 3 անգամ, 4 անգամ դատապարտվել եմ մահապատժի, որը փոխարինվել է 20 տարվա տաժանակիր աշխատանքի... 1) Անլեգալ գրականություն Բաթում տեղափոխելու համար 1903 և 1905 թվականներին բանտարկվել եմ 10 ամիս (փախել եմ)։ 2) 1905 թվականին զինված ապստամբությանը մասնակցելու համար 5 անգամ վիրավորվել եմ և ձերբակալվել 2 և կես ամիս (փախել եմ)։ 3) 1907—1908—1909 թվականներին զենքի և պայթուցիկ նյութերի տեղափոխումը կազմակերպելու համար՝ Գերմանիայում ձերբակալվել եմ Բեռլինի բանտում և դժանոցում 2 տարի, ուր որոշ հանձնվել եմ Ռուսաստանին որպես հիվանդ։ Ռուսաստանում—Թիֆլիսում՝ կրկին բանտում և դժանոցում 1909—1911 թթ. (փախել եմ)։ 4) 1912 թ. բռնվել եմ Սոֆիայում (Բուլղարիա)։ 5) Թուրքիայում—Կոստանդնուպոլսում՝ զինամթերք տեղափոխելու համար։ 6) Թիֆլիսում 1913 թ. 4 անգամ դատապարտվել եմ մահապատժի, որը մանիֆեստով փոխարինվել է 20-ամյա տաժանակրության, իսկ ապա ներվել եմ 5/3—1917 թ., Վրաստանում 1920 թ. հունվարի 15-ին բանտարկվել եմ 2 և կես ամսով և ազատվել եմ»[6]։

1905—1907 թթ. ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում Կամոն ակտիվ մասնակցություն է ունենում ցարիզմի դեմ ուղղված զինված պայքարին։ Պարտիայի Կովկասյան Միութենական կոմիտեի հանձնարարությամբ նա զբաղվում է բանվորների մարտական խմբերի ձևավորման, զինման և ուսուցման գործերով։ 1905 թ. դեկտեմբերին Թիֆլիսի պրոլետա-

---

5 ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 55, թ. 8։

6 Նույն տեղում, ֆ. 31։

բիատի դինված ապստամբության ժամանակ Կամոն հինգ անգամ վիրավորվելուց հետո բռնվում է և բանտարկվում Մետեխի բանտում, սակայն իր հնարամտությամբ և խիզախությամբ խաբելով ոստիկանությանը, Շանշիաշվիլու անվան տակ ազատվում է և 1906 թ. մարտին կազմակերպում 37 բոլշևիկների փախուստը Քութաիսի բանտից։ Նույն ամսին Կամոն անցնում է Պետերբուրգ, որտեղ անձամբ ծանոթանում է Վ. Ի. Լենինի հետ, հաճախակի լինում Լենինի ու Կրուպսկայայի մոտ Կուոկալայում։ Պարտիայի առաջնորդի հետ անձնական ծանոթությունն ու հետագա հաճախակի հանդիպումները խոշոր նշանակություն են ունենում Կամոյի ռևոլյուցիոն դաստիարակության համար, դարձնում են նրան մինչև վերջ համոզված ու անհողդողդ լենինյան, Վ. Ի. Լենինի գործին անսահմանորեն նվիրված ականավոր ռևոլյուցիոներ։

1907 թ. հունիսի 13-ին մի մարտական խմբի գլուխ անցած Կամոն Թիֆլիսի կենտրոնում, Երևանյան (այժմ՝ Վ. Ի. Լենինի անվան) հրապարակում, օրը ցերեկով, խիզախ հարձակումով բռնագրավում է 250 հազար ռուբլու պետական դրամ և տրամադրում ժողովրդական ապստամբության կարիքներին։

Այդպիսի էքսպրոպրիացիաները Վ. Ի. Լենինը համարում էր միանգամայն թույլատրելի։ Դեռևս 1905 թ. հոկտեմբերին «Ռևոլյուցիոն բանակի ջոկատների խնդիրները» հոդվածում Վ. Ի. Լենինը նշում էր. «...էրեսների, ոստիկանների, ժանդարմների սպանություններ, ոստիկանատների պայթեցումը, ձերբակալվածների ազատումը, կառավարական դրամական միջոցներ ապստամբության կարիքների վրա դործադրելու նպատակով խլելը,—այդպիսի գործողություններն արդեն կատարվում են ամեն տեղ, որտեղ ապստամբություններ բորբոքվում է, թե Լեհաստանում, թե Կովկասում, և ռևոլյուցիոն բանակի ամեն մի ջոկատ պետք է անհապաղ պատրաստ լինի այդպիսի գործողություններին»[8]։ 1906 թ. սեպտեմբերին «Պրոլետարի» թերթում հրապարակված «Պարտիզանական պատերազմը» հոդվածում Վ. Ի. Լենինը ընդգծելով Կովկասյան և Մոսկովյան էքսպրոպրիացիաների անհրաժեշտությունը, գրում էր. «Խոշոր էքսպրոպրիացիաները (Կովկասյանը՝ 200 հազարից ավելի ռուբլու, Մոսկվայինը՝ 875 հազար ռուբլու) գործադրվել են առաջին հերթին հենց ռևոլյուցիոն պարտիաների համար»[9]։ Այնուհետև Վ. Ի. Լենինը նշում էր. «Ս. Դ. բոլշևիկներին հաճախ մեղադրում են պարտիզանական ելույթների նկատմամբ թեթևամիտ-աշառու վերաբերմունքի մեջ։ Այդ պատճառով ավելորդ չէր լինի հիշեցնել, որ պարտիզանական գործողությունների վերաբերյալ բանաձևի նախագծում («Партийные Известия»-ի № 2 և Լենինի զեկուցումը համագումարի մասին) բոլշևիկների այն մասը, որը դրանք պաշտպանում է, առաջադրել է դրանց ճանաչման հետևյալ պայմանները. մասնավոր դույքի «էքսերը» բոլորովին թույլ չէին տրվում. պետական դույքի «էքսերը» չէին հանձնարարվում, այլ միայն թույլ էին տրվում պարտիայի վերահսկողության ու միջոցները ապստամբության կարիքներին հատկացնելու պայմանով։ Պարտիզանական գործողությունները տեղորի ձևով հանձնարարվում էին ընդդեմ կառավարական բռնացողների ու ակտիվ սահմանադրականների, բայց հետևյալ պայմաններով. 1) հաշվի առնել լայն մասսաների տրամադրությունը. 2) ուշադրություն առնել տվյալ վայրի բանվորական շարժման պայմանները. 3) հոգալ, որ պրոլետարիատի ուժերը դուր չվատնվեն։ Այս նախագծի գործնական տարբերությունը Միավորիչ համագումարի ընդունած բանաձևից բազառապես այն է, որ պետական դույքի «էքսերը» թույլ չեն տրված»[10]։

Բոլշևիկյան կազմակերպության և անձամբ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ 1906—1912 թթ. Կամոն մեծ գործունեություն է ծավալում արտասահմանում։ Ինչպես ինքն է գրում, նա եղել է Եվրոպայի 19 պետություններում[11]՝ Գերմանիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Իտալիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Հունաստանում, Թուրքիայում, Բուլգարիայում, Ռումինիայում և այլն։ Կամոն խոսում էր չորս լեզվով՝ հայերեն, ռուսերեն, վրացերեն, գերմաներեն[12]։

Դեռևս դպրոցական տարիներին Կամոն մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրում էր համաշխարհային գրականության պատմությունը, աշխարհագրությունը, երազում էր ճանապար-

7 Տե՛ս Н. К. Крупская, Воспоминания о Ленине, էջ 124։ ЦГИА УССР, ֆ. 385, գ. 2340, թ. 21։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 539—540։

9 Նույն տեղում, հատ. 11, էջ 259։

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 11, էջ 267—268։

11 Տե՛ս ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31։

12 Տե՛ս նույն տեղում։

հորդել ամբողջ աշխարհում։ «Ես ...-դրել է նա,—շատ էի սիրում աշխարհագրություններ և ուժեղ կերպով զբաղվում էի նրանով։ Երազում էի ճանապարհորդել... Ես ուզում էի տեսնել Փարիզը, Հունաստանը, Հռոմը...»[13]։ Պատմելով իր Հունաստանում գտնվելու մասին, Կամոն գրել է. «...Ես շատ էի սիրում Հունաստանի պատմությունը, և այդ սերն ինձ մոտ երկար պահպանվեց։ Երբ ես 1912 թվականին եղա Հունաստանում, անսահման սիրով դիտեցի այդ երկիրը, հիացա ավերակներով և մի քանի անգամ այցելեցի Պարթենոնը»[14]։ Սակայն Կամոն արտասահմանյան երկրներում ճանապարհորդ չէր, այլ պարտիական ամենապատասխանատու հանձնարարությունների հմուտ կատարողը։ Հաճախ նա ստիպված էր գնում արտասահման, թաքնվելու համար ոստիկանական դաժան հետապնդումներից։

Առաջին անգամ Կամոն արտասահման է անցնում 1906 թ. դարնանը։ ՌՍԴԲՊ IV («Միավորիչ») համագումարի օրերին (1906 թ. ապրիլ) նա կատարում է պարտիայի հանձնարարություններ՝ կազմակերպում համագումարի պատգամավորների տեղափոխումը Պետերբուրգից Ստոկհոլմ և նրանց վերադարձը։ 1906 թ. աշնանը պարտիայի առաջադրանքով Կամոն գնում է արտասահման՝ կազմակերպելու ռեոլյուցիոն կարիքների համար զենքի ու զինամթերքի գնումն ու առաքումը Ռուսաստան։ Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նա լինում է Շվեդիայում, Բելգիայում, Գերմանիայում, Բուլգարիայում։ Նոյեմբերի 12-ին զինամթերքով բեռնավորված «Զորա» նավը, որի վրա էր գտնվում Կամոն, Սև ծովի ռումինական ափերի մոտ խորտակվում է։ Սակայն Կամոն փրկվում է և անցնում Ռուսաստան։

1907 թ. հունիսին Երևանյան հրապարակում կազմակերպած էքսպրոպրիացիայից հետո Կամոն մեկնում է Պետերբուրգ, որտեղից պարտիայի հանձնարարականով ապահովագրական ընկերության գործակալ, ավստրոհպատակ Դիմիտրի Միրսկու անձնագրով անցնում է Բեռլին։ Նա կապեր է հաստատում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների և անձամբ Կարլ Լիբկնեխտի հետ, մասնակցում տեղում կազմակերպվող պարտիական ժողովներին, լսում է գերմանական ականավոր սոցիալ-դեմոկրատների դասախոսությունները, կատարում պատասխանատու հանձնարարություններ։ Կամոն շրջագայում է մի շարք եվրոպական քաղաքներում՝ Փարիզում, Վիեննայում և այլն. հանձնում է տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին միջազգային սոցիալիստական կոնգրեսի ծանուցումները։ Բեռլինի պարտիական կազմակերպության հանձնարարությամբ Կամոն գրամ է հանձնում Փարիզի և Վիեննայի համապատասխան կազմակերպություններին։

Ցարական կառավարությունը կրնկակոխ հետևում էր Կամոյին, ոտքի էին հանված Ռուսաստանի պահնորդական ոստիկանական ողջ ապարատը, նրա արտասահմանյան գործակալությունը։ Իմանալով էքսպրոպրիացիայի ենթարկված վարկային տոմսերի համարները, ցարական իշխանությունները կարգադրում են արտասահմանում ձերբակալել յուրաքանչյուրին, ով կմանրացնի այդ տոմսերը արտասահմանյան վալյուտայով։

Ցարական պրովոկատոր Ժիտոմիրսկու և մյուս լրտեսների մատնությամբ ձերբակալվում են բազմաթիվ պարտիական գործիչներ և այլ անձնավորություններ։ Հետապնդելով էքսպրոպրիացիայի մասնակիցներին, ձերբակալություններ են կատարվում Փարիզում, Մյունխենում, Ժնևում, Ստոկհոլմում բնակվող սոցիալ-դեմոկրատների շրջաններում։ Այս մասին Ն. Կ. Կրուպսկայան իր հիշողություններում պատմում է. «Ժիտոմիրսկին զգուշացրել էր ոստիկանությանը՝ տոմսերը մանրացնելու փորձ կատարողները ձերբակալվեցին։ Ստոկհոլմում ձերբակալվեց մի լատիշ, Ցյուրիխի խմբի անդամ, Մյունխենում՝ Օլգա Ռավիչը, Ժնևի խմբի անդամը, մեր պարտիականը, որը նոր էր վերադարձել Ռուսաստանից, Բաղդասարյանը և Խոջամիրյանը։

Ժնևում ձերբակալվեց Ն. Ա. Սեմաշկոն, որի հասցեով բացիկ էր եկել մի ձերբակալվածի անունով»[15]։

Օտարերկրյա պետությունները ամեն ինչով օգնում էին ցարական կառավարությանը՝ հայտնաբերելու ռուս էմիգրանտ ռեոլյուցիոներներին։ Գերմանիայից ցարական իշխանություններին ուղարկված մի հեռագրում ասված է. «1908 թ. օգոստոսի 5-ին Գերմանիայի բազմաթիվ քաղաքներում հետաքննություններ կատարվեցին ռուսական էմիգրանտ ռեոլյուցիոներներին հայտնաբերելու համար»[16]։ Մյունխենից Թիֆլիս հայտնում էին. «Թիֆլիսում կոդոպուտի գործով բազի ռավիչից ձերբակալված են նաև՝ Մյունխեն-Բավարիայում մեկը, որն իրեն անվանում է Բաղ-

[13] Նույն տեղում, տե՛ս Կամոյի ինքնակենսագրությունը։

[14] Նույն տեղում։

[15] Н. К. Крупская, Воспоминания о Ленине, էջ 140։

[16] ЦГИА Груз. ССР. ֆ. 22, գ. 476[10], թ. 50։

դասարյան Տիգրան, ուսանող Թավրիզ (Պարսկաստան) քաղաքից և Խոջամիրյան Միհրանը, Վերին Ադուլիսցի ուսանող, որը եկել է Փարիզից։ Նրանց մոտ հայտնաբերվել է 500 ռուբլիանոց 13 տոմս և շատ այլ դրամներ»[17]։ 1908 թ. սեպտեմբերին Մյունխենի դատարանը մի շարք մեղադրանքներ է հարուցում Օ. Ռավիչի, Տ. Բաղդասարյանի և Մ. Խոջամիրյանի դեմ և պահանջում է նրանց թողնել Բավարիայի տերիտորիան։ Էքսպրոպրիացիայի կապակցությամբ ձերբակալումներ են կատարվում նաև Ամերիկայում, Անգլիայում, Չինաստանում և այլ երկրներում։ Ամենուրեք որոնում էին Կամոյին։

Ցարական պրովոկատոր Ժիտոմիրսկու մատնությամբ 1907 թ. նոյեմբերին Բեռլինում Կամոն բանտարկվում է։ Պահպանվել են ժանդարմական բաղմաթիվ գրություններ, որոնք վկայում են Կամոյի ռևոլյուցիոն գործունեության մասին։ Նրանցից մեկում ցարական լրտեսները հայտնում էին. «Կամո, սոցիալ-դեմոկրատ-բոլշևիկ, հայ, ծնվել և դաստիարակվել է Վրաստանում, Գորի քաղաքում... Կամոյի իսկական ազգանունը ոչ ոքի հայտնի չէ. իր սեփական հայտարարությամբ, այդ անվամբ, որը նրան տրվել է 10 տարի առաջ, նա հայտնի է Բաքվում, Թիֆլիսում, Գորիում և ընդհանրապես Կովկասի շատ վայրերում գրեթե ամեն մի խանութպանի։ Կամոն այժմ 26 տարեկան է, ռևոլյուցիոն շարժման մեջ նա աշխատում է արդեն 8—9 տարի, նա վաղուց արդեն հայտնի է որպես խիստ շատ ճարպիկ, խորամանկ և հնարամիտ կազմակերպիչ ամեն տեսակի տեխնիկական միջոցառումների։ Նա կազմակերպել է զանազան պահեստներ, 11 անլեգալ տպարան, բանտից բաղմաթիվ փախուստներ, իսկ վերջին տարիներին նաև ռումբերի համար լաբորատորիաներ... Նա մասնակցել է նաև մի շարք մահ և խոշոր էքսպրոպրիացիաների։ Անցյալ տարի Կամոն եղել է Բեռլինում և ապրել է նույնպես Elsasserstrasse 44-ում, որտեղ այս տարվա նոր տոմարով նոյեմբերի 9-ին ձերբակալվել է։ Կամոն այն ժամանակ Վալլախի և նրա համախոհների հետ գնացել է Վիեննա, Սոֆիա և Վարնա, գնացել են նաև ծովով «Զորա» շոգենավով, որը խորտակվել է... Բոլշևիկների շրջանում նա միշտ օգտվել է հսկայական հարգանքով... Բոլոր բոլշևիկները, սկսած Լենինից և Նիկիտիչից, խնամում էին նրան ամենաանհավանական ձևով։ Ամբողջ հուլիսը և օգոստոսի կեսը նա ապրել է Լենինի մոտ Ֆինլանդիայի ամառանոցում...»[18]։

Կամոյի և մյուս ռևոլյուցիոն գործիչների դաժան հետապնդումները բողոքի մեծ կամպանիա են առաջացնում Եվրոպայի շատ երկրներում։ Վ. Ի. Լենինը, Կարլ Լիբկնեխտը, շատ բոլշևիկներ ու սոցիալ-դեմոկրատներ, նրանց տպագիր օրգանները իրենց պաշտպանության տակ վերցրեցին բանտերում գտնվող ռևոլյուցիայի խիզախ մարտիկներին, որոնց սպասում էին ամենադաժան պատիժները։ Սա միջազգային պրոլետարական համերաշխության արտահայտության օրինակ էր, մի նոր էջ ռուսական և եվրոպական ռևոլյուցիոներների եղբայրական համագործակցության մեջ, որից այնքան վախենում էին տիրապետող դասակարգերը։

Մեծ աշխատանք ծավալեց Վ. Ի. Լենինը Կամոյի կյանքը փրկելու ուղղությամբ։ Հայտնի է, որ ձերբակալությունից հետո Բեռլինի Մոաբիտի բանտում Կամոն խիստ վտանգավոր, բայց միաժամանակ ծայրահեղ հերոսական որոշում ընդունեց՝ նա խելագար ձևացավ, որպեսզի ազատվի ոստիկանական հետապնդումներից և չհանձնվի ցարական կառավարության դատաստանին։ Այդպիսի փորձերը սովորաբար վերջանում էին կամ իսկական խելագարությամբ կամ մեծ մասամբ բացահայտվում էին բժշկական քննությամբ։ Հարցաքննության ժամանակ Կամոյին հաջողվում է համոզել քննիչին, որ ինքն իսկապես խելագար է։ 20 ամիս շարունակ Բուխ հիվանդանոցում Կամոն ենթարկվում է ամենադաժան փորձությունների՝ հիվանդությունը վերջնականապես պարզելու նպատակով։ Մասնագետ բժիշկները ասեղներ էին մտցնում Կամոյի եղունգների տակ, այրում էին մարմինը շիկացած երկաթով, փորձում էին էլեկտրական հոսանքով և այլ բարբարոս միջոցներով։ Այս բոլորը Կամոն տանում է արտակարգ հանգստությամբ։ Վերջապես մասնագետները համոզվում են, որ իրոք Կամոն «խելագար է»։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո Մաքսիմ Գորկու հետ ունեցած զրույցի ժամանակ, վերհիշելով այս բոլորը, Կամոն իրեն հատուկ համեստությամբ ասում է. «—Շատ մտածեցի, կգիմանա՞մ, թե՞ իսկապես կխելագարվեմ։ Հենց այս լավ չէր։ Ինքս ինձ չէի հավատում, հասկանում ես։ Կարծես անդնդի վրա էի կանգնած, թե ինչից էի բռնել, չէի տեսնում։ Նրանք, իհարկե, իրենց գործը գիտեն, իրենց գիտությունը։ Իսկ կովկասցիներին չգիտեն։ Կարող է նրանց համար ամեն մի կովկասցի խելագա՞ր է։ Առավել ևս՝ բոլշևիկ։ Այդ մասին էլ էի ես մտածում այն ժամանակ։ Դե, ինչպե՞ս։ Եկեք շարունակենք, տեսնենք՝ ո՛վ՝ ո՛ւմ ավելի շատ կխելագարեց-

17 Նույն տեղում, թ. 201։

18 ЦГИА УССР, ф. 385, д. 2340, թ. 20—21։

նի։ Ոչինչ դուրս չեկավ։ Նրանք մնացին իրենց ասածին, ես՝ իմ։ Թիֆլիսում ինձ արդեն այնպես չտանջեցին։ Ըստ երևույթին, մտածեցին, որ գերմանացիք չեն կարող սխալվել»[19]։ 1909 թ. սեպտեմբերին գերմանական կառավարությունը որոշում է Կամոյին հանձնել ցարական իշխանություններին, նկատի ունենալով, որ Կամոյի հիվանդության պատճառով նրան չեն կարող դատական պատասխանատվության կանչել։

Վ. Ի. Լենինը ուշադիր հետևում էր այս բոլորին։ Նա հանձնարարում է Մ. Մ. Լիտվինովին դիմելու Կարլ Լիբկնեխտին՝ Կամոյի պաշտպանությունը Բեռլինում կազմակերպելու համար։ Կ. Լիբկնեխտը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ականավոր գործիչներից մեկի՝ իրավաբան Օսկար Կոնի հետ միասին մի քանի անգամ այցելում է Կամոյին բանտում։ «Կոնը մի քանի անգամ այցելեց ինձ,—հիշում է Կամոն,—երբ մի անգամ Կ. Լիբկնեխտի հետ միասին նա եկավ ինձ մոտ, ես գաղտնի նրան հասկացնել տվի, որ իրականում ես լրիվ առողջ եմ։ Նրանք շատ ուրախացան»[20]։ Կամոյի հետ հանդիպումներ են ունենում նաև մյուս սոցիալ-դեմոկրատական գործիչները։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ բանտում մի քանի անգամ Կամոյին այցելում է բոլշևիկյան պարտիայի հնագույն գործիչ Լ. Բ. Կրասինը։ Կ. Լիբկնեխտի առաջարկով Օսկար Կոնը, որպես հմուտ դատապաշտպան, իր վրա է վերցնում Կամոյի պաշտպանությունը։ Նա նշանակվում է ձերբակալված հոգեկան հիվանդների խնամակալ։ 1909 թ. սեպտեմբերին Կ. Լիբկնեխտը գերմանական պառլամենտում (Ռայխստագ) հարցապնդում է անում, պահանջելով ազատել Կամոյին բանտից և չհանձնել նրան ցարական կառավարությանը։ Սակայն գերմանական ռեակցիոն կառավարությունը որպես արտակարգ վտանգավոր «հանցագործի» Կամոյին շղթայված ուղարկում է Թիֆլիս։ Ակզբում նա պահվում է Մետեխի բանտում, ապա Միխայլովյան հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում։

Վ. Ի. Լենինի առաջարկով Կամոյին փրկելու համար կամպանիան շարունակվում է։ Գերմանական սոցիալ-դեմոկրատները Օ. Կոնի միջոցով Ռուսաստան են ուղարկում Կամոյի հիվանդության մասին բոլոր նյութերը։ Այս մասին Օ. Կոնի հեռագրերից մեկում ասված է. «Ուղարկում եմ էքսպերտիզայի համար բոլոր նյութերը։ Ռայխստագում հարցապնդում կլինի»[21]։ Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Բուլղարիայի և այլ երկրների առաջավոր մամուլը բողոքի ալիք է բարձրացնում, պահանջելով վերացնել Կամոյի դեմ ցարական կառավարության կողմից նախապատրաստվող դատական պրոցեսը։ Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի օրգան «Ֆորվերտս»-ը տպագրում է Օ. Կոնի հատուկ հոդվածը, որի մեջ հեղինակը ընդգծում է, որ ռուսական կառավարությունը իր տրամադրության տակ չունի անհրաժեշտ նյութեր հիվանդ Կամոյին դատելու համար։ Կամոյի պաշտպանությամբ վճռականորեն հանդես են գալիս ֆրանսիական սոցիալիստական «Յումանիտե» թերթը, գերմանական «Ֆրանկֆուրտեր ցայտունգ»-ը։ Կամոյի քույրը, հին բոլշևիկ Ջավահիր Տեր-Պետրոսյանը, իր հուշերում պատմում է, որ Օ. Կոնը անմիջապես կապեր է հաստատում իր հետ, փոխադրում է նրան 200 ռուբլի և հաղորդում մանրամասն տեղեկություններ Կամոյի մասին[22]։

Կամոյի կյանքը փրկելու համար եռանդուն աշխատանք ծավալեցին կովկասյան բոլշևիկները։ Նրանք կապ հաստատեցին Կ. Լիբկնեխտի, Ա. Լունաչարսկու և արտասահմանյան այլ ականավոր գործիչների հետ։ Այդ նպատակով Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության հանձնարարականով 1911 թ. ամռանը արտասահման է գնում ականավոր բոլշևիկ, պոետ Հակոբ Հակոբյանը, որն այդ մասին գրում է. «Ամռանը ես գնացի արտասահման։ Կանգ առա Միխա Ցխակայայի մոտ։ Փարիզում՝ Ա. Լունաչարսկուն և Բեռլինում՝ Կ. Լիբկնեխտին հանձնեցի Կամոյի դեմ գործադրած շարչարանքների ու տառապանքների մասին արձանագրությունների երկու պատճենները արտասահմանյան թերթերում հրապարակելու համար։ Նպատակը գայրույթ և բողոք առաջացնելն էր ցարական օպրիչնիկների դեմ»։ Հետագայում այդ արձանագրությունները հրապարակվեցին «Յումանիտե» և «Ֆորվերտս» թերթերում»[23]։

Մինչ Կամոյի փրկության կամպանիան դրսում շարունակվում էր, խիստ ռեժիմներ բնկերները նախապատրաստում էին նրա փախուստը Թիֆլիսի Միխայլովյան հիվանդանոցից։

---

19 М. Горький, Собрание сочинений, т. 17, էջ 343—344։

20 ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի արխիվ։ ֆ. 31, ց. 6, թ. 3։

21 Նույն տեղում։

22 Տե՛ս նույն տեղում։

23 Акоп Акопян, Сочинения, Москва, 1956, էջ 328։

որը հաջողությամբ իրականացվում է 1911 թ. օգոստոսի 15-ին։ Թիֆլիսի ոստիկանապետի տան նկուղային հարկում մի քանի օր մնալուց հետո Կամոն Բաքումիից նավով անցնում է արտասահման։ Նախապես պլանավորելով Թարնվել ոստիկանապետի տանը, Կամոն հույս ուներ, որ ոչ ոք այդ չի կասկածի։ Այդպես էլ եղավ։ Արտասահմանից Կամոն նամակ է գրում դատախազին և ոստիկանապետին, հեգնանքի ողջույններ է ուղարկում նրանց, ավելացնելով. «Իզուր են ձեր շարշարանքները, իզուր՝ ձեր որոնումները»։

Կամոն անմիջապես գնում է Փարիզ՝ Վ. Ի. Լենինի մոտ։ 1909—1912 թթ. Վ. Ի. Լենինը, Ն. Կ. Կրուպսկայան և պարտիայի մի շարք այլ ակնավոր գործիչներ ապրում էին Փարիզում։ Այնտեղ էր տեղափոխված պարտիայի Կենտրոնական օրգան «Պրոլետարի» հրատարակչությունը։ Այդ տարիներին Փարիզ, պարտիայի առաջնորդի մոտ էին գնում շատ կովկասյան էմիգրանտ բոլշևիկներ, որոնք Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ ակտիվ մասնակցություն էին ունենում Փարիզի բոլշևիկյան խմբի աշխատանքներին։ Իր հիշողություններում պատմելով Կամոյի մասին, Ն. Կ. Կրուպսկայան նշում է, որ նա «Փարիզ էր եկել խոսելու Իլյիչի հետ... Իլյիչը նրան պատմեց գործերի վիճակի մասին»[24]։ Կամոն Փարիզում Վ. Ի. Լենինի մոտ մնում է մոտ 2 ամիս, անցնելով ռևոլյուցիոն հասունության մեծ դպրոց։ Այդ ժամանակամիջոցում նրանք բազմիցս զրույցներ են ունենում։ Կամոն պատմում է Կովկասում ռևոլյուցիոն շարժումների և բոլշևիկյան կազմակերպությունների վիճակի, իր հետագա աշխատանքի պլանների մասին։ Վ. Ի. Լենինը ուշադիր լսում է նրան, ուղղություն տալիս Կամոյի գործունեությանը։ Ն. Կ. Կրուպսկայան, պատմելով Վ. Ի. Լենինի մեծագույն հոգատարության մասին Կամոյի նկատմամբ, գրում է. «...Իլյիչը զգուշությամբ աշխատում էր Կամոյին երկիր իջեցնել, խոսում էր տրանսպորտ կազմակերպելու անհրաժեշտության մասին և Հարց։ Վերջի վերջո որոշվեց, որ Կամոն կգնա Բելգիա, այնտեղ աչքի օպերացիա կանի (նա շիլ էր և լրտեսները իսկույն ճանաչում էին նրան այդ նշանից), իսկ հետո ծովով կանցնի Հարավ, ապա Կովկաս»։

Վ. Ի. Լենինը հոգ է տանում բուժման գրամական ծախսերի մասին, նշում է այն մասնագետներին, որոնց հետ Կամոն պետք է կապվի, տալիս է նրան իր մոր ամենասիրելի նվերը՝ վերարկուն։ «Ուշադիր նայելով Կամոյի վերարկուն,—հիշում է Ն. Կ. Կրուպսկայան,—Իլյիչը հարցրեց. «Ունե՞ք արդյոք տաք վերարկու, չէ՞ որ այդ վերարկուով ցուրտ կլինի նավի տախտակամածի վրա...» Եվ երբ պարզվեց, որ Կամոն ուրիշ վերարկու չունի, Իլյիչը ավեց նրան իր փափուկ, զորշ թիկնոցը, որը մայրն էր ընծայել նրան Ստոկհոլմում և որը առանձնապես դուր էր գալիս Իլյիչին...»[26]։

Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ 1911—1912 թթ. Կամոն լինում է Բելգիայում, Շվեյցարիայում, Հունաստանում, Թուրքիայում, Բուլգարիայում։ Չնայած Ռուսաստանի և եվրոպական բոլոր պետությունների կառավարական օրգանների հետապնդումներին, Կամոն, շնորհիվ իր արտակարգ հնարամտության, համարձակության ու երկաթյա կամքի, կարողանում է կազմակերպել զենքի, դինամիտների և մարքսիստական գրականության առաքումը Ռուսաստան։ Պարտիայի և անձամբ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ արտասահմանում կատարած իր շրջագայությունների ընթացքում Կամոն ծանոթանում է ռևոլյուցիոն շատ ակնավոր գործիչների հետ, զարմանք ու հիացմունք պատճառելով նրանց։ Ռևոլյուցիոն պայքարի բարեկամները ամենուրեք օգնում էին Կամոյին՝ կատարելու Վ. Ի. Լենինի հանձնարարությունը։

1911 թ. նոյեմբերին Սոֆիայում Կամոն հանդիպում է միջազգային և բուլգարական բանվորական շարժման ակնավոր գործիչ Դ. Ն. Բլագոևին, որն արդեն լսել էր Կամոյի մասին։ «Ես գործակալի հետ գնացի փնտրելու Բլագոևին,—հիշում է Կամոն,—բայց ահա անսպասելիորեն մենք հանդիպեցինք նրան փողոցում։ Ես շնորհակալություն հայտնեցի գործակալին և գնացի Բլագոևի հետ, բացատրեցի նրան, թե ինչումն է գործը և ասացի, թե ով եմ ես։ Նա զարմացավ և ասաց, որ ինձ գիտե Թերթերից և Կոպենհագենի միջազգային կոնգրեսում լսել է, թե ինչպես գերմանական պատգամավոր Կոնը պատմել է իմ մասին ռուսական պատգամավորներին»[27]։ 1912 թ. գարնանը, երբ Կամոն կրկին ձերբակալվում է Սոֆիայում՝ Ռուսաստան զենք տեղա-

[24] Н. К. Крупская, Воспоминания о Ленине, էջ 171։

[25] Նույն տեղում։

[26] Նույն տեղում։

[27] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 312, թ. 74։

փոխելու մեղադրանքով, նրա ազատումը կազմակերպելու հարցով անմիջապես դրազվում է Ռ. Ն. Բլագոևը՝ բուլգար ժողովրդի մեծ ու անմահ դավակը։

Բուլգարիայից Կամոն վերադառնում է Ռուսաստան՝ Կովկաս, շարունակելով իր ռևոլյուցիոն գործունեությունը։ Վ. Ի. Լենինի հանձնարարությունը կատարելու նպատակով շրջադայելով Պետերբուրգում, Օդեսայում և Ռուսաստանի այլ քաղաքներում, Կամոն դալիս է Թիֆլիս, որտեղ 1913 թ. սկզբին ձերբակալվում է, բանտարկվում և դատապարտվում մահապատժի։ Այս անգամ բոլորն արդեն համոզված էին, որ Կամոն չի փրկվի։ Սակայն խիզախ ռևոլյուցիոնները չէր ընկճվում, նա կատակով ասում էր. «Դետին բողոքում է, որ ես քայլում եմ նրա վրայով»28։ Երբ դատարանում հայտարարում են դատավճիռը, Կամոն հայտարարում է. «Իմ աստվածը, իմ հավատը սոցիալիզմն է, ուրիշ հավատ ես չունեմ և չեմ կարող ունենալ»։ Կամոն նորից փորձում է փախչել, հեղնանքով ասելով. «Կարող է հաջողվի նորից ծիծաղել մեր թշնամիների վրա»29։ Այս անգամ Կամոյի մահապատիժը, Ռոմանովների տան թագավորության 300-ամյակի կապակցությամբ, փոխարինվում է 20 տարվա տաժանակրության։ Իմանալով այդ մասին, նա ասում է. «Չէի ցանկանա մահապատժից ազատվել մանիֆեստի շնորհիվ։ Լավ կլիներ ազատվեի սեփական միջոցներով։ Բայց միևնույն է, ես երկար չեմ նստի, ես վրեժխնդիր կլինեմ»30։

Թիֆլիսից Կամոյին տեղափոխում են Խարկովի տաժանակիրների բանտը, որտեղ նա մնում է մինչև Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակը։ Պահպանվել են Կամոյի՝ բանտից իր հարազատներին ուղարկված նամակները, որոնք վկայում են նրա ֆիզիկական ու բարոյական բարձր կոփվածության մասին։ Այդ նամակներից մեկում Կամոն գրում էր. «Վարել ազնիվ ու բարոյական կյանք, շհրապուրվել վայրկյանական հաճույքներով, որովհետև մարդու ոչ մի բան այնքան չի քայքայում և՛ ֆիզիկապես, և՛ բարոյապես, որքան անբարոյականությունը»31։ Այնուհետև Կամոն հայտնում է, որ ինքն առողջ է ու կայտառ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախապատրաստման ու իրագործման ժամանակաշրջանում Կամոն բազմիցս լինում է Վ. Ի. Լենինի մոտ, կատարում նրա կարևոր հանձնարարությունները։ 1917 թ. վերջերին Պետերբուրգից գալով Կովկաս, Կամոն Ստեփան Շահումյանին է հանձնում ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ Վ. Ի. Լենինի ստորագրած մանդատը՝ Ս. Շահումյանին Կովկասի գործերի արտակարգ կոմիսար նշանակելու մասին և 500 ռուբլի՝ ոսկով, Բաքվի Սովետի կարիքների համար։

Օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և բազաբացիական պատերազմի տարիներին Կամոն ակտիվ մասնակցություն է ունենում Դենիկինի, Մախնոյի և այլ կոնտրռևոլյուցիոն բանդաների ջախջախմանը, Բաքվի պրոլետարիատի դինված պայքարին՝ Սովետական իշխանության հաղթանակի համար։ Այս ծանր ժամանակաշրջանում Վ. Ի. Լենինը մշտական հոգատարություն է ցուցաբերում Կամոյի ուսման ու աշխատանքի նկատմամբ։ 1919 թ. ամռանը զինվորական իշխանություններին ուղղած գրագրություններից մեկում նշելով, որ ինքը Կամոյին գիտե հիմնավոր կերպով՝ որպես կատարյալ բացառիկ նվիրվածության և եռանդի տեր մարդու, Վ. Ի. Լենինն առաջարկում էր արագ կազմակերպել Կամոյի ուսուցման գործը և հանձնարարել նրան՝ ստեղծել հատուկ ջոկատ թշնամու թիկունքում գործելու համար։ 1919 թ. սեպտեմբերին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ Կամոյին տրված վկայականում ասված էր. «Սույնը ներկայացնող ընկ. Կ. Պետրովին, որն ունի № 483 տոմսը (մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը) ԿԳԿ շենքը մտնելու համար և որը աշխատում է ԿԳԿ բաժիններից մեկում, ճանաչում եմ անձամբ»։ Այնուհետև Վ. Ի. Լենինը առաջարկում էր սովետական հիմնարկներին, զինվորական և այլ իշխանություններին՝ Կամոյին ցույց տալ լիակատար վստահություն և ամեն տեսակի աջակցություն։

Պարտիզանական ջոկատների գլուխ անցած՝ Կամոն խիզախ ու անսպասելի հարձակումներ է կատարում թշնամու վրա, քայքայում նրա թիկունքը։ 1919 թ. վերջերին կարևոր հանձնարարությամբ Կամոն գալիս է Թիֆլիս, բայց շուտով մենշևիկյան կառավարության կողմից ձերբակալվում է։ Երկու և կես ամիս բանտում պահվելուց հետո, շնորհիվ իր հմտության, Կամոն ազատվում է և գնում Բաքու։

28 «Մարտակոչ», 1923, № 118։

29 «Զարյա Վոստոկա», 1925, № 926։

30 ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 5։

31 Նույն տեղում։

1920 թ. մայիսին Կամոն գնում է Մոսկվա։ Վ. Ի. Լենինի խորհրդով նա պատրաստվում է ընդունվելու զինվորական ակադեմիա։ Պատմելով Կամոյի մասին, Մաքսիմ Գորկին գրում է, որ այդ ժամանակ, լինելով իր մոտ, Կամոն մեծ կրքով խոսում է արտասահման գնալու, այնտեղ աշխատելու մասին, բայց Լենինն արգելել էր և առաջարկել սովորել։ «Հանդրեցի Իլյիչին,— պատմում է Կամոն,—«Բա ց թող, ես արտասահմանում օգտակար մարդ կլինեմ»։—«Ո՛չ,—ասում է,—սովորի՛ր»։ Է՛հ, ի՛նչ արած։ Նա գիտի՛։ Ինչպիսի՜ մարդ է։ Ծիծաղում է, երեխայի պես։ Դու լսե՞լ ես ինչպես է ծիծաղում Իլյիչը»։ 1921 թ. Կամոն գործուղվում է Իրան, ուր մնում է մինչև 1922 թ. սկիզբը։ Դույն թվականի գարնանը, երբ բժիշկների խորհրդով Վ. Ի. Լենինն պատրաստվում էր գալ Վրաստան հանգստանալու և բուժվելու, Կամոն դիմում է նրան սիրով ցանկություն հայտնելով ուղեկցել և օգնել Լենինին այդ գործում։

Իր կյանքի վերջին տարիներին Կամոն աշխատում է Արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատում և Վրաստանի առևտրական մաքսատանը։ 1922 թ. հուլիսի 14-ին Թիֆլիսում. հեծանիվով ընկնելով ավտոմոբիլի տակ, Կամոն զոհվում է։ Նրա թաղման ելույթներ են ունենում Ս. Կ. Օրջոնիկիձեն, Ա. Ֆ. Մյասնիկյանը, Ն. Նարիմանովը և ուրիշներ, որոնք բոլորն էլ խոսում են Կամոյի նվիրվածության մասին հեղափոխության գործին, նշում, թե ինչպես ջերմորեն էր սիրում նրան Վ. Ի. Լենինը։ «Թանկագի՜ն Կամո,— ասում է իր ճառում Սերգո Օրջոնիկիձեն,—Հանդիպեցի քեզ 18 տարի առաջ։ Ես երիտասարդ էի։ Դու քո պարտքն էիր համարում բացատրելու ինձ՝ ինչպես դառնալ բոլշևիկ, ինչպես պայքարել պրոլետարիատի շահերի համար։ Այսօր վիճակված է բաժանվել քեզանից... Այդ 18 տարվա ընթացքում մենք շատ անգամ ենք հանդիպել... Եվ շատ անգամ դու շարադրել ես քո պլանները կապիտալիզմի դեմ պայքարելու մասին... Երբեմն այդ պլանները անիրականանալի ցնորք էին թվում... Հիշում եմ, թե ինչպես այդ պլանների մասին դու խոսում էիր հեղափոխության առաջնորդ ընկեր Լենինի հետ, որը ջերմորեն սիրում էր քեզ... Երբ ես հանդիպեմ Լենինին, չգիտեմ, թե ինչ պիտի ասեմ նրան։ Մոսկվայից ժամանած ընկերները մեզ ասում են. «Ի՜նչպես դուք չկարողացաք պահպանել Կամոյին»։ Կամոն թաղվում է Թիֆլիսում, Պուշկինյան պարկում։ Նրա գերեզմանի վրա դրված բազմաթիվ պսակներից մեկն ունի հետևյալ մակագրությունը. «Անմոռանալի Կամոյին Լենինից և Կրուպսկայայից»։

Կամոյի կյանքը մի գեղեցիկ, իրական հեքիաթ էր, որը ոգեշնչել և ոգեշնչում է մեր երիտասարդությանը՝ անձնվիրաբար պայքարելու կոմունիզմի հաղթանակի համար։

ЛЕГЕНДАРНЫЙ КАМО

(К 80-летию со дня рождения)

Проф. Г. Б. ГАРИБДЖАНЯН

(Резюме)

Известный большевик-подпольщик Камо (Семен Аршакович Тер-Петросян), вовлекшись с юношеских лет в революционную борьбу, благодаря своей исключительной смелости и безграничной преданности делу освобождения трудящихся вскоре сделался признанным деятелем большевистского подполья и опасным врагом царского самодержавия. В. И. Ленин лично знал Камо и питал к нему полнейшее доверие. Горький восхищался его сказочной отвагой, считая его легендарной личностью. В числе друзей Камо были такие известные деятели коммунистического движения, как Карл Либкнехт, Благоев, Шаумян, Орджоникидзе, Луначарский и многие другие.

В борьбе за победу рабочего класса Камо всю свою сознательную жизнь действовал на самых передовых линиях. Царские жандармы, преследовавшие его по пятам, неоднократно писали в донесениях, что большевик Камо, настоящее имя которого никому не известно, является чревычайно опытным и ловким конспиратором, организатором 11 нелегальных типографий, многочисленных побегов из тюрем политических заключенных и других «антиправительственных» деяний и что он пользуется большой любовью и авторитетом среди рабочих и большевиков.

После установления советской власти Камо с кипучей энергией отдался строительству новой жизни. Умер Камо в результате нелепого случая в 1922 г.